## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

*Հունարեն քարտեզ նշանակում է* ***գծագիր****: Հույները կանոնակարգեցին քարտեզի պատկերային տեսքը՝ հենվելով մարդու ընկալման առանձնահատկությունների վրա: Մեզ հասած հնագույն քարտեզներից առավել պատկերավորը II դարի Պտղոմեոսի կազմած ատլասն է: Միջին դարերում ծովագնացության զարգացումը առաջ բերեց նոր տիպի քարտեզներ «ՊՈՐՏՈՒԼԱՆՆԵՐ», որոնք անհրաժեշտ էին հատկապես ծովագնացներին: Այս քարտեզների օգնությամբ, օգտագործելով կողմնացույցը և նավի արագության կանոնավոր չափումները, կարելի էր որոշել նավի գտնվելու վայրը:*

*Հետաքրքրական է, որ առաջին տիեզերագնացների համար տիեզերանավի խցիկում տեղակայվեցին ինքնակառավարվող գլոբուսներ, որոնք տիեզերագնացին ցույց էին տալիս տիեզերանավի՝ Երկրի նկատմամբ այդ պահին գտնվելու տեղը և անցած ուղին:*

